



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

<<13>> փետրվարի 2024թ.

N ՄՈ/95- -Ա

ք. Արմավիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 22-Ի  
N ՄՈ/32-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2022 դեկտեմբերի 7-ի N79-Ն հրամանը և Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչության պետի 2024 թվականի փետրվարի 7-ի զեկուցագիրը.

ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2024 թվականի հունվարի 22-ի «Հասմիկ Լազարյանին «Հուշակերտի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի և վարչատնտեսական մասի համակարգողի պարտականությունները կատարող նշանակելու մասին» N ՄՈ/32-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը՝

- 1) որոշման 2-րդ կետում «տնօրենի և վարչատնտեսական մասի համակարգողի պաշտոնային դրույքաչափին համապատասխան» բառերը փոխարինել «9 դասարան ունեցող տնօրենի աշխատավարձի գործակցին համապատասխան՝ 247810 (երկու հարյուր քառասունյոթ հազար ութ հարյուր տասը) Հայաստանի Հանրապետության դրամ» բառերով:
- 2. Սույն որոշման գործողությունը տարածվում է 2024 թվականի հունվարի 22-ից հետո ծագած հարաբերությունների վրա:

Недействительная подпись



ՄԱՐԶՊԵՏ

Подписано: KHUDATYAN DAVIT 1308910274 Դ. ԽՈՒԴԱԹՅԱՆ